թէ և շէն էր Աբուսահլի ժամանակ, զի կան կ'ըսէ և ոչ կային եկեղեցիքն։

ՄԷՑՈՒՄ կամ ՍԱՖԴ ՄԱՑՈՒՆ՝ ձիզէ գաւառի Զաւիէ վիճակի մէջ գեղ մի է, «ուր կայ եկեղեցի մի հասարակաց, երեք » սեղանովք. մէջտեղին՝ Ղփտեաց է, յա- » նուն քաջ նահատակին Թէոդորոսի, երկ- » րորդն՝ Հայոց է, յանուն փառաւորեալ » վկային Ս. Գէորգայ, երրորդն նուիրեալ » Տիրուհւոյ Կուսին Մարիամու՝ Մելքի- » տաց է »։

ՖԱՑՈՒՄ. — Հին և անուանի քաղաք է համանուն վիճակի, և այսպէս կոչուի Ֆիում բառիւ Ղփտեաց, որ լիճ կամ ծով նշա- նակէ, քովի անուանի հին Մերիս լճին հա- մար, յորում շատ կոկոդրիլոսք կային, այն պատճառաւ Կոկոդրիլոպոլիս անուանեցին, նա և Աբսինոյէ։ Ցաշխարհահամարի 1885 տարւոյ՝ 26000 բնակիչ ունէր։ Աբուսահլ կ'ըսէ, թէ Քիֆդ Մեսրեմի որդին, Թոռն Քամայ՝ շիներ է այս քաղաքս, և Յովսէփ նահապետ նորոգեր է, և Նիլոսաչափ մի հաստատեր է. յետ երկար ստորագրու- թեան՝ վերջացընէ այսպէս. «Մելքիտք այլ » եկեղեցի մի ունին՝ Հայոց բաղին մէջ». գուշակուի ուրեմն որ մերոնք այլ եկեղեցի մի ունէին, զոր չի յիշեր. և թէպէտ այս Ֆայումի վիճակին մէջ 25 վանք կային